ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Մ. ՊԱՊԻԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պապիկյան.

Ի պատասխան Ձեր 08.05.2020թ. գրության՝ տեղեկացվում է, որ Թբիլիսյան խճուղում վերգետնյա հետիոտնային անցում կառուցելու հարցն ուսումնասիրվել և քննարկվել է ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության աշխատակիցների հետ համատեղ:

Հաշվի առնելով, որ քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունում առկա էին 2 վերգետնյա հետիոտնային անցումների կառուցման նախագծային փաստաթղթերը՝ Թբիլիսյան խճուղում (կազմվել է 2017թ.) և Մյասնիկյան 12ա հասցեում (կազմվել է 2019թ.), իսկ Երևան քաղաքի 2020թ. բյուջեով վերգետնյա հետիոտնային անցումների կառուցման համար նախատեսված է 80.0 մլն. դրամ, որը բավարար է միայն մեկ անցման կառուցման համար, Երևանի քաղաքապետարանի կողմից հարցում էր ուղարկվել ՀՀ ոստիկանության «ճանապարհային ոստիկանություն» ծառայություն՝ հասցեի ընտրության վերաբերյալ իրենց դիրքորոշումը ներկայացնելու համար:

24.02.2020թ. հ.14/7/6154-20 գրությամբ ստացված մասնագիտական եզրակացության համաձայն առաջնահերթությունը տրվել էր Մյասնիկյան պողոտայի հ.12ա հասցեի հարակից տարածքին: Միաժամանակ, «Ծառուկյան» բարեգործական հիմնադրամի կողմից առաջարկ էր ներկայացվել իրենց միջոցներով կառուցելու նշյալ վերգետնյա անցումը:

Ելնելով վերոգրյալից, Երևանի քաղաքապետարանի 2020թ. ծրագրերով ներկայացվել էր Թբիլիսյան խճուղու նրբանցքի հարակից հատվածում վերգետնյա հետիոտնային անցման կառուցման աշխատանքների գնման հայտը:

Սակայն, հաշվի առնելով, որ նշված հասցեում վերգետնյա անցման կառուցումը ոչ նպատակահարմար է, համապատասխան գրություն է ուղարկվել աշխատակազմի գնումների վարչություն՝ չեղարկելու վերոնշյալ վերգետնյա անցման կառուցման աշխատանքների մրցույթը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ